

Քրիստոսի: 15 Եւ քանզի դուք ձեզէն գիտեք, զի հրապարակախաւսէի ընդ ձեզ՝ զոր ինչ խաւսէի, արժան էր ինձ հրապարակաւ մեռանել ի ձեւք, զի այնմ՝ իսկ ցանկացեալ էի. բայց բարութեալ ինձ վիճակն ընդ ընտիրս, եւ ժառանգութիւն իմ հաճոյ եղել ինձ: 16 Աւրինեցից զՏէր, որ այս մասին վիճակի ժառանգութեան ապրեցոյց զիս. եւ մեծապէս խնդութիւն է ինձ, զի վաղվադակի լուծայց ես յանաւրէն եւ յամբարիշտ աշխարհէ աստի յայսմանէ: 17 Եւ բազում ինչ խաւսեցաւ ընդ նոսա եւ զգուշացոյց զնոսա. եւ աղաչեաց զամենեսին զգուշանալ անձանց, եւ պահել զպատուիրանս Տեառն:

18 Եւ յետ այսորիկ սկսաւ զարինն գունդ գունդ ի ներքուստ ընդ բերանն արտաքս հոսել իբրեւ զերկուս ժամս: 19 Եւ յետ այսորիկ յարուցեալ եկաց յաղաւթս. եղեալ ծունր, խնդրէր զթողութիւն ի վերայ սպանողին իւրոյ: 20 Ապա յետ այսորիկ յիշէր յաղաւթս իւր զամենայն մարդս, զմերձաւորս եւ զհեռաւորս, զանարգս եւ զպատուականս. եւ զայնոսիկ անգամ, զորս երբէք ոչ ճանաչէր զնոսա, յիշէր յաղաւթս իւր: 21 Եւ յետ աղաւթիցն կատարելոյ համբարձեալ զձեռս իւր եւ զաչս իւր ընդ երկինս, ասաց. Տէր Յիսուս Քրիստոս, ընկալ զիոզի իմ: 22 Եւ զայս ասացեալ, արձակեաց² զոզի: 23 Եւ առեալ զմարմին սրբոյն Ներսեսի զամեն Աստուծոյ պաշտանեայք եկեղեցոյն, եւ Փաւստոս Եպիսկոպոս, եւ պաշտանեիցն զիսաւոր՝ Տրդաճ, եւ Մուշեղ սպարապետն եւ Յայր մարդպետ, եւ ամենայն ազատագունդ բանակն արքունի, բարձին յաւանէն ի Խախ գեղջէ՝ ուր գործն կատարեցաւ, տարան ի Թիլն յաւանն յիւր գելն: 24 Հանդերձ սաղմոսիւք եւ աւրինութեամբ, կանթեղիւք վառելովք եւ մեծապաշտմամբք եւ բազում յիշատակաւք զսուրբն յուղարկեցին: 25 Բայց մինչ չէն էր ծածկեալ զմարմին սրբոյն, ինքն թագաւորն Պապ երթեալ պատեաց եւ թաղեաց ի մարտիրոսական ի բնակութիւնն. բայց թագաւորն Պապ ի չքմեղս լինելով՝ չլուելոյն ամներ, իբրեւ թէ իւր չիցէ գործեալ զայն:

ԳԼՈՒԽ ԻԵ.

1 Յաղագս տեսլեանն՝ որ երեւեցաւ արանցն սրբոց անապատաւորաց, Շաղիտայ եւ Եպիփանու, մինչ դեռ նստէին ի լերինն:

2 Արք երկու կրանաւորք անապատաւորք մինչ դեռ նստէին ի լերինն, անուն միում Շաղիտա, եւ էր սա ազգաւ ասորի, եւ նստէր յԱմեւծ լերինն. եւ միումն անուն Եպիփան, եւ էր սա ազգաւ յոյն, եւ նստէր սա ի մեծի լերինն ի տեղի դիցն՝ զոր կոչեն աթոռ Անահտայ³. Եւ էին սոքա երկոքին լեալ աշակերտք սրբոյն Դանիելի՝ զոր վերագոյնն յիշեցաք. եւ մինչ դեռ յիւրաքանչիւր

1 Ի չորս օրինակս՝ այծմ. ի միւս այլ՝ այծմ

2 Օրինակ մի յաւելու՝ զսրբասնեալ

3 Յամենայն օրինակս՝ Նահատայ